Ծրագիրն իրականացվում է Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի կողմից

Ծրագիրն իրականացվում է Հանրային քաղաքականության ինստիտուտի հետ համատեղ

Ծրագիրն իրականացվում է Իրազեկ քաղաքացիների միավորում ՀԿ-ի հետ համատեղ

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Դրական փոփոխություն՝ քաղաքացիական հասարակության հզորացման միջոցով

Կարողությունների զարգացման դասընթացի մասնակցության հրավեր

Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան կազմակերպությունը (ԲՀՀ - Հայաստան) հրավիրում է մարդու իրավունքների, քրեական արդարադատության և սոցիալական արդարության ոլորտներում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ)՝ մասնակցելու մշտադիտարկման և ջատագովության կարողությունների զարգացման դասընթացի: Դասընթացն ընդգրկված է «Դրական փոփոխություն՝ քաղաքացիական հասարակության հզորացման միջոցով» ծրագրում, որը իրականացնում է ԲՀՀ-Հայաստանը՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ և համագործակցելով *Հանրային քաղաքականության ինստիտուտ* և *Իրազեկ քաղաքացիների միավորում* կազմակերպությունների հետ:

Դասընթաց

Դասընթացը նշված ծրագրի՝ կարողությունների զարգացմանն ուղղված հատվածի բաղադրիչն է: Նրա նպատակն է բարձացնել ՔՀԿ-ների մեթոդաբանական և տեխնիկական կարողությունները՝ մարդու իրավունքների, քրեական արդարադատության և սոցիալական արդարության ոլորտներում մշտադիտարկման և փաստահեն ջատագովության նպատակով: Դասընթացն իր մեջ ներառելու է հետևյալ թեմաները՝ փաստահավաքության հետազոտական մեթոդաբանություն, տվյալների կառավարում, զեկույցների պատրաստում, ինչպես նաև փաստահեն ջատագովություն: Դասընթացը կտրամադրի ներածական գիտելիքներ մշտադիտարկման և ջատագովության, ինչպես նաև, ծրագրի վեց թեմատիկ ուղղությունների վերաբերյալ, որոնք հետևյալն են. **ընտանեկան բռնությունից, խոշտանգումից, խտրականությունից զերծ մնալու իրավունքներ, արդար դատաքննության իրավունք, որակյալ կրթության և առողջապահության մատչելիության իրավունք:** Դասընթացի մոդուլները մշակվել են տեղացի և միջազգային փորձագետների կողմից ստեղծված մշտադիտարկման և ջատագովության գործիքակազմի հիման վրա: **Դասընթացը տեղի կունենա սեպտեմբերի 12-ից 16-ը, Աղվերանում:**

Սովորել՝ անելով

Ծրագիրը կարողությունների զարգացումը զուգակցում է ենթադրամաշնորհների տրամադրմամբ, որը կօգնի ՔՀԿ-ներին ստացված գիտելիքները փորձարկելուն և ամրագրելուն: Դասընթացը բարեհաջող ավարտելուն պես ՔՀԿ-ներին կառաջարկվի ներկայացնել ենթադրամաշնորհային ծրագրեր, նշված վեց ուղղություններից մեկով կամ մի քանիսով մշտադիտարկում և ջատագովություն անելու համար:

Ենթադրամաշնորհիների նպատակն է քաջալերել քաղաքացիական հասարակության համակարգված և արդյունավետ մասնակցությունը հանրային քաղաքականության մշակման գործընթացում, որը իր մեջ կներառի մշտադիտարկում և քաղաքականության մշակում, ինչպես նաև կառուցողական ու նպատակային երկխոսություն կառավարության և միջազգային հանրության հետ՝ մարդու իրավունքների, քրեական արդարադատության և սոցիալական արդարության վերաբերյալ: ԲՀՀ-Հայաստանը կտրամադրի մինչև 8000 եվրո կազմող **վեց դրամաշնորհներ**: ԲՀՀ-Հայաստանը և *Հանրային քաղաքականության ինստիտուտը* կաջակցեն դրամաշնորհառուներին ծրագրերի իրականացման ողջ ընթացքում՝ տրամադրելով խորհրդակցություն թե՛ դրամաշնորհի կառավարման, թե՛ մշտադիտարկման մեթոդաբանության վերաբերյալ:

Գիտելիքի հանգույց

Այս ծրագրի շրջանակներում *Հանրային քաղաքականության ինստիտուտում* կստեղծվի «Գիտելիքի հանգույց», որը կծառայի որպես հարթակ՝ մշտադիտարկման և ջատագովության գործիքների և մեթոդների շարունակական մշակման, թարմացման և տարածման համար: «Գիտելիքի հանգույցում» ներգրավված կլինեն ծրագրի թիրախային վեց ոլորտների փորձագետներ, որոնք խորհրդատվություն կտրամադրեն ՔՀԿ-ներին մշտադիտարկում և ջատագովություն իրականացնելու ընթացքում: «Գիտելիքի հանգույցը» կտրամադրի մշտադիտարկման և ջատագովության գործիքակազմ-ձեռնարկ (հասանելի կլինի առցանց և տպագիր տարբերակով), որը կներառի հետևյալ բաղադրիչները **ծրագրի թիրախային յուրաքանչյուր ոլորտի համար**.

- Ինստիտուցիոնալ և իրավական շրջանակի վերլուծություն,
- Հիմնական խնդիրների համակողմանի դիտարկում,
- Մարդու իրավունքների խախտումները չափելու համար նախատեսված չափորոշիչներ,
- Ոլորտի խնդիրների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և վերլուծության մեթոդաբանություն,
- Փաստահեն ջատագովության մեթոդաբանություն:

Գիտելիքի հանգույցը նաև կունենա տվյալների շտեմարան, որտեղ կզետեղվեն ՔՀԿ-ների կողմից իրականացված մշտադիտարկման տվյալները: Տվյալները կներկայացվեն վիճակագրական գծապատկերների միջոցով և հասանելի կլինեն բոլորին:

Ով կարող է դիմել

Այս դասընթացի անմիջական շահառուները բոլոր այն ՔՀԿ-ներն են, որոնք աշխատում են վերը նշված վեց ոլորտներում: Հատուկ ուշադրության կարժանանան նոր և երիտասարդ կազմակերպությունները (մինչև 5 տարի պատմությամբ), որոնք ավելի պակաս փորձ ունեն իրենց ոլորտում:

ՔՀԿ-ն պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

- Գրանցված է Հայաստանի Հանրապետությունում՝ վերջին 5 տարիների ընթացքում
- Գործունեություն է իրականացրել վերը նշված թիրախային ոլորտներից առնվազն մեկում՝ վերջին 5 տարիների ընթացքում:
- Իր նպատակների մեջ ՔՀԿ-ն ունի վերը նշված ոլորտներից որևէ մեկում մշտադիտարկում և ջատագովություն իրականացնելը: Սրանք կարող են նշված լինել ՔՀԿ-ի Կանոնադրության

մեջ, ռազմավարական փաստաթղթերում, գործողությունների ծրագրում և այլ փաստաթղթերում:

- Կարող է ներկայացնել փաստարկված տվյալներ առ այն, որ նշված ոլորտներում իրականացրել է մշտադիտարկում և/կամ ջատագովություն (մշտադիտարկման զեկույցները, վերլուծությունները, առաջարկությունները, համառոտագրերը, որևէ ձևաչափով հավաքագրված տվյալները և այլ փաստաթղթեր հասանելի են):

Քաղաքացիական նախաձեռնությունները (չգրանցված) նույնպես կարող են դիմել և ընտրվել այս ծրագրի շրջանակներում, եթե համապատասխանում են վերոնշյալ չափանիշներին: Հետագա դրամաշնորհային մրցույթի փուլին մասնակցելու համար քաղաքացիական նախաձեռնությունները պետք է գրանցվեն որպես կազմակերպություն կամ դիմեն գրանցված կազմակերպության հետ համատեղ:

Դիմելու կարգը

Դիմորդները պետք է տրամադրեն հետևյալ փաստաթղթերը.

ա) լրացված դիմում (հավելված 1),

բ) վերջին երեք տարիներին իրականացրած քաղաքականության և ջատագովության նախաձեռնությունները, ծրագրերը կամ այլ գործողությունները ներկայացնող ամփոփող փաստաթուղթ (օր.՝ մշտադիտարկման զեկույց) և/կամ ոլորտում իրականացված այլ ծրագրերի համառոտ նկարագրություն (հավելված 2):

Պահանջվող փաստաթղթերը պետք է ուղարկել register@osi.am էլեկտրոնային հասցեին մինչև **2018 թվականի հուլիսի 27, 15:00:**

Ընտրությունը կկատարվի ծրագիրն իրականացնող երեք կազմակերպությունների և անկախ փորձագետների կողմից: Դասընթացին ընտրված դիմորդները կտեղեկացվեն մինչև օգոստոսի 31-ը: Հարցերի համար խնդրում ենք զանգահարել ԲՀՀ-Հայաստան գրասենյակ Աշոտ Գրիգորյանին՝ 010 533862 հեռախոսահամարով, կամ գրել ashot@osi.am էլ-փոստի հասցեին:

Հավելված 1

Պատասխանեք յուրաքանչյուր հարցին 250 – 300 բառի սահմաններում

Հարց 1. Ինչու՞ եք ցանկանում մասնակցել դասընթացին:

Հարց 2. Ի՞նչ է տալու Ձեզ դասընթացի մասնակցությունը:

Հարց 3. Ի՞նչպես եք օգտագործելու դասընթացի արդյունքում ձեռք բերված գիտելիքները և հմտությունները Ձեր գործունեության մեջ:

Հարց 4. Ծրագրի թիրախային 6 ոլորտներից որու՞մ եք գործունեություն ծավալում: Համառոտ նկարագրեք ոլորտի հիմնախնդիրները:

Հարց 5. Ինչու՞ եք կարծում, որ դրանք հիմնախնդիրներ են:

Հարց 6. Ինչպե՞ս եք պատկերացնում այդ հիմնախնդիրների հնարավոր լուծումները:

Հավելված 2

Նկարագրեք ծրագրի թիրախային 6 ոլորտներից որևէ մեկում իրականացրած ծրագրերը (մեկ էջ)՝ նշելով ծրագրի նպատակը, ժամկետները, աշխարհագրությունը, արդյունքները, բյուջեն և ֆինանսավորման աղբյուրը: